# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱՐՋՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ
համայնք, Գ.ԱՐՋՈՒՏ, Հեռ. 093 19 91 34 ,
arjut.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

N ԳԱ21
*05 փետրվար 2018թ.*

Կից Ձեզ ենք ներկայացնում Արջուտ համայնքի ավագանու թիվ 03-Ա, 04-Ա, 05-Ա որոշումները:

05.02.2018

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

*Կատ.* `

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

«01» փետրվարի 2018թվական, 03 –Ա

## ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. Դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետի պահանջների համաձայն, հիմք ընդունելով «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 08.01.2018թ. թիվ 1 դրական եզրակացությունը՝
Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

1.Լոռու մարզի Արջուտ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող ջրային ֆոնդի նպատակային նշանակության, հիդրոտեխնիկական ջրատնտեսային և այլ օբյեկտների 0.325754 հա հողամաս /կադաստրային ծածկագիր՝06-019-0105-0151/ փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, արդյունաբերական հողերի գործառնական նշանակության՝ ավտոպահեստամասերի արտադրամասի կառուցման նպատակով:

2.Առաջարկել համայնքի ղեկավար Վ.Մկրտչյանին ապահովել իրավունքների պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում,համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Տիգրան | | | |
| Դալլաքյան Վազգեն | | | |
| Խոյեցյան Հովհաննես | | | |
| Մկրտչյան Սաթենիկ | | | |
| Շահինյան Անդրանիկ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.Ս.ՄԿՐՏՉՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«01» փետրվարի 2018թվական, 05 –Ա

### ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Արջուտ համայնքի ղեկավար Վարդան Շայվալատի Մկրտչյանին տրամադրել միանվագ դրամական խրախուսում՝ 240000 (երկու հարյուր քառասուն հազար) դրամ գումարի չափով՝ իր դրույքաչափին համապատասխան:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Տիգրան | [signature] | | |
| Դալլաքյան Վազգեն | [signature] | | |
| Խոյեցյան Հովհաննես | [signature] | | |
| Մկրտչյան Սաթենիկ | [signature] | | |
| Շահինյան Անդրանիկ | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature, stamp] Վ.Շ.ՄԿՐՏՉՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

«01» փետրվարի 2018թվական, 04 –Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին մասի 42-րդ կետով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Տիգրան | | | |
| Դալլաքյան Վազգեն | | | |
| Խոյեցյան Հովհաննես | | | |
| Մկրտչյան Սաթենիկ | | | |
| Շահինյան Անդրանիկ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.Շ.ՄԿՐՏՉՅԱՆ